ՊԵՏՈՒԹՅԱՆԿԱՐԻՔՆԵՐԻՀԱՄԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ՄԱԾՁԲ-22-12-2

ք. Երևան

14.03.2022թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ. Բրուտյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝Պատվիրատու), մի կողմից, և «Արմենիան Արմ» հայրենասիրական ՀԿ-ն, ի դեմս տնօրեն Բ. Հարությունյանի, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համհայրենասիրական ՀԿայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

1.3 Սույն Պայմանագրի գործողությունը տարածվում է 2022թ. Հուվարի 28-ից կողմերի միջև ծագած հարաբերությունների վրա:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրիգործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ:Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության երկու օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 12 000 000 (տասներկու միլիոն) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և եռամսյակներին (ամիսներին): Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան 26.12.2022թ:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրինչհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ(ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համհայրենասիրական ՀԿայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են

պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարայի պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համհայրենասիրական ՀԿայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համհայրենասիրական ՀԿայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համհայրենասիրական ՀԿայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրու մփոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համհայրենասիրական ՀԿայնությամբ՝ համհայրենասիրական ՀԿայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարհայրենասիրական ՀԿգվել մինչև պայմանագրով այդժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով իսկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայությա նմատուցման ժամկետը կարող է երկարհայրենասիրական ՀԿգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել, քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքովկամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համհայրենասիրական ՀԿայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում,

պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համայրենասիրական ՀԿայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքում: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով:Համայրենասիրական ՀԿայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 7 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչությունը (կառուցվածքային ստորաբաժանում է հանդիսանում՝ ՀՀ ՊՆ Տ և ՀԿ գլխավոր վարչությունը):

8.ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Արմենիան Արմ» հայրենասիրական ՀԿ
ՀՀ ք. Երևան Բագրևանդի 5	ՀՀ ք. Երևան, Հ. Հակոբյանի 3
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Էվոկաբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 1660014593600100
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 01297612
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	Տնօրեն
Կ. ԲՐՈՒՏՅԱՆ	Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 1
N ՄԱԾՁԲ-22-12-2 պայմանագրի

Տեխնիկական բնութագիր

1. Միջոցառումների հետ կապված ծառայություններ:
«Արմենիան Արմ» ծրագրի շրջանակներում 2022 թվականի ընթացքում տարաբնույթ միջոցառումների կազմակերպում.

- ՀՀ Զինված ուժերի կազմավորման 30 ամյակին նվիրված հունվարի 28-ին Երևան քաղաքի մետրոյի "Երիտասարդական" կայարանին հարակից զբոսայգում "Արմենիան Արմ" հայրենասիրական հասարակական կազմակերպության երիտասարդական թևի կողմից հուշ-երեկոյի և մոմավառության, իսկ Վազգեն Սարգսյանի անվան ռազմական համալսարանում՝ համերգային միջոցառման կազմակերպում 3 մենակատարների մասնակցությամբ, երաժշտական սարքավորումները տրամադրել է մատակարարը, ընդամենը 1 միջոցառում, մասնակիցների թիվը՝ 70 մարդ:
- Երևան քաղաքի և ՀՀ մարզկենտրոնների ժամանցային վայրերում, ուսումնական հաստատություններում միջոցառումների կազմակերպում/սպորտային մրցումներ/մարտեր առանց սահմանափակումների պրոֆեսիոնալ մարզիկների մասնակցությամբ/, համերգային ծրագրեր ճանաչված երգիչների մասնակցությամբ, երաժշտական սարքավորումները տրամադրում է մատակարարը, ֆլեշմոբեր/՝ նվիրված Հայոց բանակի անցած ուղու, պատմության, զինական հաղթանակների, սպայական կազմի և շարքային մարտիկների հերոսությունների քարոզչությանը, ընդամենը 5 միջոցառում, ներգրաված մասնակիցների քանակը՝ 100-125 մարդ:
- Բնապահպանական արշավների, լեռնագնացությունների կազմակերպում պատմամշակույթային արժեք ունեցող վայրեր/ Ամբերդ, Արշակունիների դամբարան, Տեղերի վանք, Բյուրականի Սբ Հովհաննես եկեղեցի, Վահանավանք, Զորաց եկեղեցի, Մաթոսավանք, Ջուխտակ վանք / հուշարձանների և տեսարժան վայրերի մաքրման աշխատանքներ իրականացնելու նպատակով: Արշավները իրականացվելու են հոգևորականների և պատմաբանների ուղեկցությամբ, ընդամենը 8 այցելություն, մասնակիցների թիվը 30-40 մարդ:
- Այցելություններ ՀՀ ԶՈՒ զորամասեր/զորամասերը ընտրվում են պատվիրատուի կողմից, տեղակայման վայրը հայտնվում է ոչ ուշ, քան այցելությունից 2 օր առաջ/՝ հայտնի մարզիկների, թատերական խմբակների, երգիչ-երգչուհիների, ներգրավմամբ, ընդամենը 4 այցելություն, մասնակիցների քանակը 15-20 մարդ:
- Մասնագիտացված հրաձգարաններում, համապատասխան հրահանգիչների մասնակցությամբ, դիպուկահարների պատրաստության, հրաձգության դասերի կազմակերպում մինչև նախազորակոչային տարիքի երիտասարդների մասնակցությամբ, դասերի քանակը՝ 5, մասնակիցների ընդհանուր քանակը՝ 30-40 մարդ:
- ՀՀ պետական տոների կամ հիշատակի օրերի կապակցությամբ Արմենիան Արմ Հայրենասիրական ՀԿ-ի տարբերանշաններով ամենագնացներով և կվադրոցիկլներով թեմատիկ արշավների կազմակերպում Ծաղկաձոր՝ զինված ուժերի սպաներին խրախուսելու նպատակով, ընդամենը 2 այցելություն, մասնակիցների ընդհանուր քանակը 80-100 մարդ:
- Երևան քաղաքի կենտրոնում գտնվող հյուրանոցներում կոնֆերանս քննարկումների կազմակերպում ճանաչված մարզիկների, արվեստի և մշակութային գործիչների, անվանի գործարարների, հայրենադարձված երիտասարդների մասնակցությամբ: Թվով 10 կոնֆերանս, մասնակիցների քանակը՝ 450-500 մարդ:
- Հայաստանի ողջ տարածքում այցելություններ կրթօջախներ, մանկատներ՝ անվանի զինվորականների, գործարարների, մարզիկների ուղեկցությամբ, ուղղված հայրենասիրական ոգու բարձրացմանը: Այցերի ընթացքում հայրենասիրական թեմաներով խորհրդանշական նվերների հանձնում՝ ըստ մասնակիցների քանակի: Թվով 5 այց, մասնակիցների ընդհանուր քանակը՝ 300-350 մարդ:

Տրանսպորտայի, տեխնիկական և կազմակերպչական այլ ծախսերը իրականացվում են մատակարարի կողմից:

Ծանոթություն՝

- Կնքվելիք պայմանագրով նախատեսված ծառայությունների տեխնիկական բնութագրին համապատասխանող և դրա որևէ բաղադրիչի գծով որակական հատկանիշները գերազանցող ծառայություններ մատուցելու դեպքում հնարավոր է ծառայությունների ընդունումը, եթե առկա է հայտը նախագծած անձի գրավոր մասնագիտական եզրակացություն:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	«Արմենիան Արմ» հայրենասիրական ՀԿ Տնօրեն
Կ. ԲՐՈՒՏՅԱՆ	Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Գնման ժամանակացույց

Հ/հ	Ծառայության Անվանումը	Հ/մ	Քանակ	Միավորի գինը /ՀՀ դրամ/	Ընդհանուր գումարը	Ծառայությունների մատուցումը 2022թ. Ըստ եռամսյակների՝			
						1-ին	2-րդ	3-րդ	4-րդ, բայց ոչ ուշ քան 10.12.2022թ.
1	Միջոցառումների հետ կապված ծառայություններ, այդ թվում՝	դրամ	1		12000000				
	ՀՀ Զինված ուժերի կազմավորման 30 ամյակին նվիրված հունվարի 28-ին Երևան քաղաքում համերգային միջոցառման կազմակերպում	հատ	1	1000000	1000000	1			
	Երևան քաղաքում և ՀՀ մարզերում միջոցառումների կազմակերպում/սպորտային մրցումներ, համերգային ծրագրեր, ֆլեշմոբեր/՝ նվիրված Հայոց բանակի անցած ուղու, պատմության, զինական հաղթանակների, սպայական կազմի և շարքային մարտիկների հերոսությունների քարոզչությանը	հատ	5	500000	2500000	2	1	1	1
	Բնապահպանական արշավների, լեռնագնացությունների կազմակերպում պատմամշակույթային արժեք ունեցող վայրեր/ Ամբերդ, Արշակունիների դամբարան, Տեղերի վանք, Բյուրականի Սբ Հովհաննես եկեղեցի, Վահանավանք, Զորաց եկեղեցի, Մաթոսավանք, Ջուխտակ վանք / հուշարձանների և տեսարժան վայրերի մաքրման աշխատանքներ իրականացնելու նպատակով: Արշավները ուղեկցվելու են հոգևորականների և պատմաբանների ուղեկցությամբ	հատ	8	187500	1500000			8	
	Այցելություն ՀՀ ԶՈՒ զորամասեր /զորամասերը ընտրվում են պատվիրատուի կողմից, տեղակայման վայրը հայտնվում է ոչ ուշ քան 2 օր առաջ/ հայտնի մարզիկների, թատերական խմբերի, երգիչ-երգչուհիների ներգրավմամբ	հատ	4	250000	1000000	2			2
	Դիպուկահարների պատրաստության, հրաձգության դասերի կազմակերպում մինչև նախազորակոչային տարիքի երիտասարդների մասնակցությամբ	հատ	5	140000	700000			5	

	ՀՀ պետական տոների կամ հիշատակի օրերի կապակցությամբ Արմենիան Արմ Հայրենասիրական ՀԿ-ի տարբերանշաններով թեմատիկ արշավների կազմակերպում զինված ուժերի սպաներին խրախուսելու նպատակով	հատ	2	400000	800000		2		
	Կոնֆերանս քննարկումների կազմակերպում ճանաչված սպորտսմենների, արվեստի և մշակութային գործիչների, անվանի գործարարների, հայրենադարձված երիտասարդների մասնակցությամբ	հատ	10	200000	2000000	3	4		3
	Հայաստանի ողջ տարածքում այցելություններ կրթօջախներ, մանկատներ՝ անվանի զինվորականների , գործարարների , սպորտսմենների ուղեկցությամբ, ուղղված հայրենասիրական ոգու բարձրացմանը: Այցերի ընթացքում հայրենասիրական թեմաներով խորհրդանշական նվերների հանձնում՝ ըստ մասնակիցների քանակի	հատ	5	500000	2500000	2	1		2

Հավելված N 2
N ՄԱԾՁԲ-22-12-2 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Հ/հ	Ծառայության անվանումը	CPV կոդը	Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2022թ. Պետական բյուջեից ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ, քան 26.12.2022թ. ընդ որում			
			1-ին եռամսյակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ
1	Միջոցառումների հետ կապված ծառայություններ	79951100/1	4100000	6700000	9400000	12000000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Արմենիան Արմ» հայրենասիրական ՀԿ
Տնօրեն

Բ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Հավելված N 3
N ՄԱԾՁԲ-22-12-2 պայմանագրի

Պայմանագրիկողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելուվայրը _____	գտնվելուվայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻԿԱՄԴՐԱՄԻՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « »20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրիկնքմանամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրիհամարը՝ _____
ՊատվիրատունևՊայմանագրիկողմը՝հիմք ընդունելովպայմանագրի կատարման վերաբերյալ
« » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցինսույնարձանագրությունըհետևյալիմասին.
ՊայմանագրիշրջանակներումՊայմանագրիկողմըմատուցել է հետևյալծառայությունները՝

N	Մատուցվածծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրիհամառոտշարադրանքը	քանակականցուցանիշը		կատարմանժամկետը		Վճարմանենթակագումարը /հազարդրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարմանժամանակացույցի/
			ըստպայմանագրովհաստատվածգնմանժամանակացույցի	փաստացի	ըստպայմանագրովհաստատվածգնմանժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ՄԱԾՁԲ-22-12-2 պայմանագրի

ԱԿՏ N

Պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է,որ_____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի Պատվիրատուի անունը Կատարողիանունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	Չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց
Հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն